DOI: 10.59560/18291155-2025.4-221

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ, Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքները՝ սահմանադրական կարգավորումների համատեքստում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքների վերաբերյալ տեսական գրականության մեջ ներկայացված գիտական մոտեցումները, սահմանադրաիրավական առանձին կարգավորումները և կատարված սահմանադրաիրավական հետազոտությունների հիման վրա վեր են հանվել այն երաշխիքները, որոնք ընկած են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում:

Սույն հոդվածի նպատակը սահմանադրական կարգավորումների համատեքստում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքների վերհանումն է, դրանց առանձնացումը:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն, դրան զուգահեռ, հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում այնպիսի հիմնահարցերի, որոնք առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական հետազոտության առարկա չեն հանդիսացել:

Կատարված իրավական վերլուծությունների հիման վրա, հոդվածում սահմանադրական կարգավորումների համատեքստում ներկայացվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքները՝ դրանք դիտարկելով որպես միասնական ու

փոխկապակցված փոխադարձ երաշխիքների համակարգ, որն ապահովում է այդ մարմինների միջև հավասարակշռությունը, երկկողմանի պատասխանատվությունը, արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև հանրային իշխանության ամբողջ համակարգի կայունությունն ու միասնությունը:

Հիմնաբառեր. պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ, փոխգործակցություն, երաշխիքներ.

Ներածություն

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ երկու համեմատաբար ինքնուրույն, սակայն, մշտապես փոխազդող համակարգերը նպաստում են հանրային իշխանության միասնական իրականացմանը՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման իրականացման միջոցով:

Պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք և կարողություն, պետության գործառնական կարևոր բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով[1]: Իր հերթին, հանրային իշխանության մեկ այլ ձևը՝ տեղական ինքնակառավարումը, հիմնվում է ինքնուրույնության սկզբունքի վրա, որը սահմանադրորեն ամրագրված է որպես դրա կազմակերպման և գործունեության իրավական հիմք և արձանագրում է վերջինիս կազմակերպական և գործառութային ազատությունը՝ պետության սահմանած իրավակարգի շրջանակներում:

Նման փոխգործակցության շրջանակներում՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ կայունության ապահովման, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հստակ տարանջատման և իրականացման, ինչպես նաև այդ մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ստանում այն երաշխիքների սահմանադրական ուսումնասիրությունը, որոնք ապահովում են վերջիններիս փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն իրականացվում է որոշակի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, որոնք իրենց բնույթով կարող են բազմազան և փոփոխական լինել՝ կախված տվյալ երկրի զարգացման մակարդակից, քաղաքական կառուցվածքից և սոցիալական իրադրությունից: Այդ պայմանները, հանդիսանալով հասարակության և պետության կենսագործունեության հիմնական հիմքերից, կարող են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ տեղական

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշումը:*

ինքնակառավարման իրականացման գործընթացների վրա՝ նպաստելով դրանց կայուն և արդյունավետ գործարկմանը, կամ հակառակը՝ ստեղծել լուրջ խոչընդոտներ այդ գործընթացների իրականացման ճանապարհին: Ուստի, տեղական ինքնակառավարումը կարող է արդյունավետ լինել միայն այն ժամանակ, երբ պետությունը ոչ թե պարզապես օրենսդրորեն կամրագրի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, այլ նաև կստեղծի բավարար պայմաններ տեղական ինքնակառավարման իրականացման համար:

Երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու նպատակով պետությունը պարտավոր է ստեղծել և ապահովել արդյունավետ իրավական երաշխիքներ: Այս երաշխիքների առկայությունը կենսական նշանակություն ունի ինչպես պետական իշխանության ինքնիշխան գործունեության, այնպես էլ տեղական ինքնակառավարման ինքնուրույնության երաշխավորման, ինչպես նաև հանրային իշխանության ողջ համակարգի վերահսկելիության և արդյունավետ գործունեության ապահովման տեսանկյունից:

Գիտական գրականության մեջ «երաշխիք» (ֆրանսերեն «*garantie*»՝ «անվտանգություն») հասկացության վերաբերյալ միասնական դիրքորոշում առկա չէ: Այնուամենայնիվ, մասնագիտական գրականության մեջ տարածված տեսական մոտեցման համաձայն՝ երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված իրավունքների ու ազատությունների կենսագործմանը, պահպանությանը և դրանց պատշաճ պաշտպանությանը[1]: Առանց համապատասխան երաշխիքների իրավունքներն ու ազատությունները չեն կարող կատարել իրենց առաքելությունը:

Միասնական մոտեցում առկա չէ նաև իրավունքների և ազատությունների երաշխիքների դասակարգման հարցում: Չնայած երաշխիքների դասակարգման բազմազանությանը՝ կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է արձանագրել, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված համընդհանուր տեսական մոտեցման համաձայն՝ հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխիքները ըստ գործողության ոլորտի լինում են՝ ներպետական և միջազգային, ըստ ապահովման եղանակի՝ պետական-իրավական և հասարակական, ըստ ներգործության ձևի՝ ընդհանուր հասարակական պայմաններ (քաղաքական, սոցիալական, տնտեսական, գաղափարական-կրթական) և իրավական երաշխիքներ (սահմանված են օրենքներով, պարտադիր են, ազդեցիկ և գործուն): Իրավական երաշխիքներն իրենց հերթին լինում են սահմանադրական (Սահմանադրությամբ ամրագրված) և ճյուղային-օրենսդրական (տարբեր ոլորտներ կարգավորող օրենքներով ամրագրված)[2]:

---

[1] *Տե՛ս* ***Витрук Н.В.*** *Основы теории правового положения личности в социалистическом обществе. - М.: Наука, 1979. - С. 194:*

[2] *Տե՛ս* ***Վաղարշյան Ա.Գ.****, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»: Երևան, 2017, № 3 (24), էջ 3:*

Իրավունքների և ազատությունների երաշխավորման գործում բացառիկ է Սահմանադրության դերը, որը պարունակում է բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող երաշխիք-հոդվածներ: Ամենից ընդհանուր երաշխիքը սահմանադրական կարգն է, նրա համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը, որոնք ձևավորում են իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների կայուն և կանխատեսելի շրջանակ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ[1] (այսուհետ՝ Սահմանադրություն) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքները սահմանող առանձին հոդված առկա չէ, և դրանք իրենց արտացոլումն են գտել սահմանադրական մի շարք հոդվածներում՝ կարգավորելով պետություն-համայնք փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները, գործառույթների բաշխման և վերահսկողության մեխանիզմները, տեղական ինքնակառավարման կազմակերպման հիմնարար դրույթները:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների սահմանադրական կարգավորման շրջանակներում միանշանակ է, որ Սահմանադրությունը հանդես է գալիս որպես տեղական ժողովրդավարության (local democracy) հաստատման և ամրապնդման երաշխիք՝ սահմանելով տեղական ինստիտուտների կարգավիճակը, դերը, կառուցվածքը, ձևավորման և կազմակերպման կարգը, ինչպես նաև նրանց լիազորություններն ու ֆինանսավորման հիմքերը[2]:

Տեղական ինքնակառավարման երաշխիքների դասակարգման մոտեցումներն առանձնանում են մեծ բազմազանությամբ: Օրինակ, Օ.Ե. Կուտաֆինը և Վ.Ի. Ֆադեևը դրանք բաժանում են ընդհանուր և հատուկ (իրավական) երաշխիքների: Որպես ընդհանուր երաշխիքներ նրանք դիտարկում են տնտեսական, քաղաքական հարաբերությունները, հասարակության հոգևոր հիմքերը, իսկ որպես հատուկ՝ որոշակի իրավական միջոցներ[3]: Ս.Դ. Կնյազևը տեղական ինքնակառավարման երաշխիքները բաժանում է ընդհանուրի և իրավականի: Նրա կարծիքով՝ ընդհանուր երաշխիքները ներկայացնում են տնտեսական, քաղաքական և սոցիալական պայմաններ, որոնք ազդում են (ինչպես դրական, այնպես էլ բացասական) ինքնակառավարման գործընթացի վրա[4]: Ն.Վ. Պոստովոյն առանձնացնում է տնտեսական, կազմակերպչական և իրավական երաշ-

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:*

[2] *Տե՛ս Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում (ուսումնամեթոդական ձեռնարկ): **Կ. Ալթունյան**: Եր., ԵՊՀ հրատ., 2021, էջ 69:*

[3] *Տե՛ս **Власенко Е.Е**. Конституционные гарантии муниципальной власти в России // Право и практика. 2017. № 4, էջ 33:*

[4] *Տե՛ս **Князев С.Д.** Местное самоуправление в Российской Федерации: конституционная природа и значение для муниципального права // Журнал российского права. 2008. № 6 (138), էջ 17:*

խիքները[1]: Իսկ Ե.Ս. Շուգրինան առանձնացնում է տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացման, պահպանության, պաշտպանության և վերականգնման երաշխիքները[2]: Մեկ այլ տեսական դասակարգմամբ առանձնացվում են տեղական ինքնակառավարման քաղաքական[3], տարածքային, կազմակերպական, ֆինանսատնտեսական և իրավական երաշխիքները[4]:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է տեղական ինքնակառավարման երաշխիքների բաժանումը երկու հիմնական խմբի՝ ընդհանուր և հատուկ երաշխիքների[5]:

Տեսական գրականության մեջ ընդհանուր երաշխիքների տակ հասկացվում են սոցիալ-տնտեսական, քաղաքական հարաբերությունները, հասարակության հոգևոր հիմքերն ու արժեքները, որոնք ծառայում են որպես տեղական ինքնակառավարման զարգացման նախադրյալներ, ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կայունությունը, ինչպես նաև ստեղծում են իրական հնարավորություններ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող նորմերի առավել լիարժեք իրականացման համար[6], իսկ հատուկ (իրավական) երաշխիքները դիտվում են որպես իրավական միջոցներ, պայմաններ և ինստիտուտներ, որոնց միջոցով ապահովվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը[7]: Ընդունված տեսական մոտեցման համաձայն՝ հատուկ (իրավական) երաշխիքներն ընդգրկում են իրավունքների, ազատությունների իրականացումն ու պաշտպանությունը ապահովող իրավական միջոցները[8]: Ըստ այդմ՝ ընդհանուր երաշխիքներին դասվում են սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական (հոգևոր) երաշխիքները, իսկ հատուկ երաշխիքներին՝ իրավական (իրավաբանական) երաշխիքները[9]:

Հաշվի առնելով, որ ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ երաշխիքներն իրենց արտահայտությունն են ստացել Սահմանադրության մեջ՝ սահմանադրական նորմերի տեսքով, և դրանով իսկ հանդիսանում են իրավական

---

[1] *Տե՛ս* ***Власенко Е.Е.*** *Նշվ. աշխ., էջ 33:*

[2] *Տե՛ս* ***Корнев В.Н., Нифанов А.Н.*** *Гарантии местного самоуправления: теоретико-методические аспекты. - Белгород, 2008, էջ 9:*

[3] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք // ընդհանուր խմբագրությամբ* ***Գ.Դանիելյանի****: Երևանի պետ. համալս., «Հայրապետ», 2015, էջ 78:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 213:*

[5] *Տե՛ս* ***Шайхуллин М.С.*** *Конституционно-правовые гарантии развития местного самоуправления в Российской Федерации: Диссертация ... доктора юридических наук: 12.00.02, էջ 67:*

[6] *Տե՛ս* ***Карасева М.В.*** *Финансовое правоотношение. - М., 2001, էջ 254:*

[7] *Տե՛ս Муниципальное право: учебник /* ***С.Г. Соловьев, Е.И. Бычкова****. - М., 2015, էջ 422:*

[8] *Տե՛ս* ***Козлова Е.И, Кутафин О.Е.*** *Конституционное право Российской Федерации: учебник. - М.: Юрист, 1995, էջ 191:*

[9] *Տե՛ս* ***Фарбер И.Е., Ржевский В.А.*** *Вопросы теории советского конституционного права. Выпуск 1. - Саратов, 1967, էջ 25,* ***Эбзеев Б.С.*** *Советское государство и права человека. - Саратов, 1986, էջ 69:*

երաշխիքներ, և ըստ իրենց նպատակի՝ ուղղված են տեղական ինքնակառավարման ֆինանսական, տնտեսական և կազմակերպական ինքնուրույնության ապահովմանը, ինչպես նաև դատական և այլ իրավական պաշտպանության ձևերի իրականացմանը, գտնում ենք, որ նման դասակարգումը տեսականորեն լիարժեք հիմնավորված չէ: Մեր կարծիքով՝ տեղական ինքնակառավարման ընդհանուր և հատուկ երաշխիքները գործում են որպես փոխկապակցված բաղադրիչներ՝ իրավական երաշխիքների տեսքով:

Տեղական ինքնակառավարման քաղաքական երաշխիքները ներառում են պետության քաղաքական-իրավական ռեժիմը: Դրանք կոչված են ապահովելու հանրային կառավարման համակարգում և պետական իշխանության մարմինների հետ հարաբերություններում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը: Տեղական ինքնակառավարման կարևոր քաղաքական երաշխիքներից են՝ պետությունում ժողովրդավարական քաղաքական ռեժիմի առկայությունը, տեղական ինքնակառավարման ճանաչումը որպես ժողովրդաիշխանության իրացման ինքնուրույն ձև, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման ժողովրդավարական մեխանիզմները, պետական իշխանության համակարգի կառուցումը՝ իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հստակ տարանջատումը, ինչպես նաև գաղափարախոսական բազմակարծության և բազմակուսակցական համակարգի ճանաչումն ու երաշխավորումը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում (Սահմանադրության 179-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչը նշանակում է, որ համայնքը հանդիսանում է տեղական ինքնակառավարման հիմնական միավորը: Որպես տեղական ինքնակառավարման երաշխիք՝ պետությունը պարտավոր է որպես վարչատարածքային միավոր ստեղծել համայնքներ, որոնցում պետք է իրականացվի տեղական ինքնակառավարում: Նշված պահանջը բխում է նաև Սահմանադրության 121-րդ հոդվածից:

Ընդ որում, տեղական ինքնակառավարման իրականացման համար ոչ միայն անհրաժեշտ է վարչատարածքային միավորների՝ համայնքների ստեղծումը, այլ նաև՝ դրանց տարածքային կայունության իրավական երաշխիքների ապահովումը: Այս առումով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան[1] սահմանում է տեղական ինքնակառավարման տարածքային հիմնարար երաշխիք՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգիռ համայնքների հետ, հնարավորության դեպքում, նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով)»: Դրան համապատասխան, Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանվում է, որ հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել:

[1] *Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա: Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, ընդունվել է 15.10.1985 թ.*

Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ պետական իշխանության հետ փոխգործակցության շրջանակում տեղական ինքնակառավարման արդյունավետ իրականացումը պահանջում է տեղական ինքնակառավարման իրականացման համար անհրաժեշտ վարչատարածքային միավորի ստեղծում և դրա տարածքային փոփոխությունների հստակ և իրավականորեն կարգավորված ընթացակարգերի հաստատում՝ բացառելով պետական իշխանության մարմինների կողմից կամայական փոփոխությունները:

Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների ոչ միայն իրավունքն է, այլև կարողությունը, քանի որ նշված իրավունքն իրացնելու համար վերջիններս պետք է ունենան համապատասխան ռեսուրսների ձևավորման աղբյուրներ (օրինակ՝ ֆինանսական, կազմակերպական, մարդկային):

Տեղական ինքնակառավարման երաշխիքների հաջորդ խումբը ֆինանսատնտեսական երաշխիքներն են: Այս երաշխիքները նպատակ ունեն ստեղծել նյութատեխնիկական և ֆինանսական բազա, որը թույլ կտա տեղական ինքնակառավարման մարմիններին ինքնուրույն և հաջողությամբ կատարել իրենց լիազորությունները և ապահովել համայնքի զարգացումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը (Սահմանադրության 11-րդ հոդված): Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, ներառյալ՝ համայնքային սեփականությունը (Սահմանադրության 10-րդ հոդված): Այս սահմանադրական հիմքերն իրենց ամրագրումն են ստացել ոչ միայն որպես սահմանադրական կարգի հիմունք, այլ նաև որպես մարդու հիմնական իրավունք, որը Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով տարածվում է նաև համայնքների՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձանց վրա:

Այսպիսով, համայնքի կարևորագույն տնտեսական երաշխիքը նրա՝ այլ սուբյեկտների հետ հավասար հիմունքներով (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մաս) սեփականություն ունենալու, ինչպես նաև տնտեսական գործունեություն ծավալելու իրավունքն ու կարողությունն է (Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (այսուհետ՝ Խարտիա) 3-րդ, 9-րդ հոդվածներ, Սահմանադրության 184-րդ հոդված):

Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ինքնուրույնության և մունիցիպալ միավորների համաչափ ֆինանսավորման երաշխիքները սահմանված են Խարտիայի 9-րդ հոդվածով: Դրանով հռչակված է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ տնօրինելու սեփական ֆինանսավորման միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են օգտագործել իրենց լիազորությունների շրջանակում (Խարտիայի 9-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում,

նույն հոդվածի 2-րդ մասով հռչակվում է նաև, որ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին: Որպես տեղական ինքնակառավարման ֆինանսա-տնտեսական կայունության կարևոր երաշխիք, անհրաժեշտ է առանձնացնել նաև Խարտիայի 9-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված այն կարգավորումը, որը համայնքների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով պահանջում է համապատասխան ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի հաստատում կամ հավասարազոր միջոցառումներ:

Համայնքներն ունեն իրենց բյուջեն, որը ձևավորում են ինքնուրույն, բյուջեի եկամուտների երաշխավորված աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը ապահովելու համար (Սահմանադրության 185-րդ և 186-րդ հոդվածներ):

Համայնքների ֆինանսավորման կարևոր երաշխիք են Սահմանադրության 186-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված կարգավորումները, որոնք պահանջում են համայնքներին պետության կողմից լիազորություններ պատվիրակելու դեպքում՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորում և սահմանում են պետության պարտավորությունը՝ պետության հնարավորությունների շրջանակներում միջոցներ հատկացնելու համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

Կարող ենք արձանագրել, որ տեղական ինքնակառավարման ֆինանսա-տնտեսական երաշխավորվածության հիմքը համայնքային սեփականությունն ու տեղական բյուջեն են: Իսկ որպես Սահմանադրությամբ ամրագրված ֆինանսա-տնտեսական երաշխիքներ՝ տեղական ինքնակառավարման համակարգում կարող ենք առանձնացնել՝ 1) համայնքների տնտեսական ինքնուրույնության ճանաչումը, 2) համայնքային սեփականության առկայությունը և համայնքների կողմից դրա տնօրինման հնարավորությունը, 3) տեղական բյուջեն կազմելու և տնօրինելու իրավունքը, 4) համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայությունը և տեղական եկամուտների աղբյուրների օրենսդրական ամրագրումը, 5) պետության կողմից ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պարտավորությունը, 6) պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորումը, 7) համայնքների տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունքը:

Չնայած համայնքների տնտեսական ինքնուրույնության ճանաչմանը՝ տեղական ինքնակառավարման երաշխիքների գործնական իրականացումը կախված է պետության ընդհանուր տնտեսական կայունությունից, հատկապես, երբ տեղական մակարդակի խնդիրներն անհրաժեշտ է լուծել սահմանափակ ռեսուրսների պայմաններում: Արդյունավետ տեղական ինքնակառավարման համար անհրաժեշտ է տնտեսապես կայուն պետություն, որն ի վիճակի է ապահովել ֆինանսական ռեսուրսների հավասարակշռված բաշխում պետական և տեղական մակարդակների միջև՝ լիազորությունների հստակ բաժանմամբ:

Առանց բավարար նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև

արդյունավետ համագործակցությունը դժվար է պատկերացնել: Օրենքով երաշխավորված սեփական ռեսուրսների առկայությունը և պետության ֆինանսատնտեսական աջակցությունը համայնքներին կենսական նախապայման է նրանց կայունության և ինքնուրույնության համար: Հակառակ դեպքում համայնքները կդառնան կենտրոնական իշխանությունից կախված՝ կորցնելով իրենց ինքնուրույն գործելու կարողությունը:

Տեղական ինքնակառավարման պաշտպանությանն ուղղված կարևորագույն իրավական երաշխիքներից մեկը տեղական ինքնակառավարման իրավունքի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավունքների կամայական սահմանափակման արգելքն է: Այս երաշխիքը տարբեր երկրների սահմանադրություններում իր ամրագրումն է ստացել տարբեր իրավական նորմերի տեսքով: Որոշ երկրների սահմանադրություններում այն ամրագրված է ուղղակիորեն՝ որպես առանձին իրավական նորմ, մինչդեռ այլ երկրներում այն ձևակերպված է անուղղակիորեն՝ այլ իրավական սկզբունքների շրջանակներում:

Թեև Սահմանադրությունում տվյալ երաշխիքը ուղղակի ձևով արտահայտված չէ, այնուամենայնիվ, Սահմանադրության մի շարք դրույթներ անուղղակիորեն ենթադրում են դրա իրավական երաշխավորումը: Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության միջուկն օրինականության սկզբունքն է (Սահմանադրության 6-րդ հոդված), որը որպես ամբողջ հանրային իշխանության իրականացման հիմք սահմանում է Սահմանադրությունը կամ օրենքը: Սահմանադրության 6-րդ հոդվածն օրինականության սկզբունքն ընդգրկում է լայն առումով՝ դրանում ներառելով ոչ միայն Ազգային ժողովի կողմից կամ հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքը, այլ նաև իրավական նորմերի աստիճանակարգության մեջ բարձրագույն տեղ զբաղեցնող Սահմանադրությունը (5-րդ հոդվածի 1-ին մաս)[1]:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների կառուցման շրջանակներում նման ամրագրման միջոցով Սահմանադրությունը հանրային իշխանության բոլոր մարմիններին կաշկանդում է Սահմանադրությամբ (Սահմանադրության գերակայությամբ): Օրինականության սկզբունքի համաձայն՝ հանրային իշխանության մարմինների լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով, վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սա ուղղակիորեն ենթադրում է, որ տեղական ինքնակառավարման իրավունքների սահմանափակումը թույլատրելի է միայն օրենքով, և հանրային իշխանության ոչ մի մարմին իրավունք չունի առանց որևէ իրավական հիմքի՝ օրենքով հաստատված շրջանակներից դուրս սահմանափակելու դրանք և յուրաքանչյուր դեպքում պետք է գործի՝ ելնելով սահմանադրական իրավունքների և ազատությունների

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-1384 որոշումը:*

սահմանափակման ընդհանուր չափանիշներից՝ ա) սահմանափակման համաչափության սկզբունք (Սահմանադրության 78-րդ հոդված), բ) սահմանափակման որոշակիության սկզբունք (Սահմանադրության 79-րդ հոդված), գ) իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները (Սահմանադրության 81-րդ հոդված):

Սահմանադրության ընդունումը դեռևս չի նշանակում, որ դրանում ամրագրված իրավական նորմերն ու գաղափարները արդեն իսկ իրականություն են, ուստի դրանց իրագործումն ու պաշտպանությունը պահանջում է լրացուցիչ օրենսդրական-նորմատիվային կարգավորում: Այս համատեքստում կարևոր նշանակություն է վերապահվում օրենսդիր իշխանությանը, քանի որ տեղական ինքնակառավարման իրականացման վերաբերյալ բազմաթիվ հարցեր կարգավորվում են օրենքներով: Սահմանադրությունն այս համատեքստում հանդես է գալիս որպես կարևոր երաշխիք՝ օրենսդիր իշխանության մարմնի վրա դնելով պարտականություն՝ իրավունքներն ու ազատությունները կարգավորելիս օրենքներով սահմանելու դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր (Սահմանադրության 75-րդ հոդված): Սահմանադրությունը, դրանով իսկ, փաստորեն, պարտավորեցնում է օրենսդիր իշխանության մարմնին օրենքների ընդունման միջոցով ձևավորել այնպիսի իրավական հիմք, որը կապահովի տեղական ինքնակառավարման իրավունքների լիարժեք իրագործումն ու պաշտպանությունը՝ սահմանադրական սկզբունքներին համապատասխան: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության շրջանակներում այն հանդիսանում է պետական իշխանությանն ուղղված սահմանադրական պահանջ՝ տեղական ինքնակառավարման ոլորտի սահմանադրական նորմերի արդյունավետ իրականացման համար ստեղծելու անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական այս նորմերը ծառայում են ոչ միայն որպես պետական իշխանության գործունեության սահմանափակման և վերահսկողության միջոց, այլ նաև հանդիսանում են պետական իշխանության կարևոր երաշխիք՝ սահմանելով, որ տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող գերազանցել իրենց իրավասությունները և պետք է գործեն պետության սահմանած իրավական կարգի շրջանակներում, ինչը պետական իշխանության կայունության և պետությունում հաստատված իրավական կարգի ապահովման երաշխիք է:

Տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավորապես՝ համայնքի ավագանին, ևս օժտված է նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությամբ (Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս): Համայնքի ավագանու կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր կատարման համայնքի տարածքում գործող բոլոր իրավասուբյեկտների՝ ներառյալ պետական իշխանության մարմինների կողմից: Այս իրավակարգավորումը կարևոր իրավապաշտպան և ինստիտուցիոնալ երաշխիք է՝ կանխելու կենտրոնական իշխանության գերիշխան

միջամտությունը համայնքային ինքնակառավարմանը և պետական իշխանության հետ փոխհարաբերություններում ծառայում է որպես իրավական հավասարակշռության և տեղական ինքնուրույնության կարևոր երաշխիք:

Իրավական երաշխիքների համակարգում առանցքային նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ վարչական վերահսկողության իրավական կարգավորումը: Խարտիայի «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը» վերտառությամբ 8-րդ հոդվածով սահմանվում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում: Խարտիայի բացատրական զեկույցը սահմանափակում է այս հոդվածի կիրառելիության ոլորտը միայն այն հսկողությամբ, որը իրականացվում է «այլ կառավարման մակարդակների» կողմից, այսինքն՝ կենտրոնական մարմինների կամ տարածաշրջանային իշխանությունների կողմից[1]:

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց վերապահված լիազորություններն իրականացնում են սեփական պատասխանատվությամբ, ինչը պետությանն արգելում է տեղական ինքնակառավարման մարմիններին հրահանգել, թե նրանք իրենց իրավասությանը վերապահված ո՞ր հարցը լուծեն կամ ինչպե՞ս իրականացնեն իրենց լիազորությունները: Միևնույն ժամանակ, տեղական ինքնակառավարման մարմիններին հակակշռելու, նրանց կողմից օրենքների պահպանումն ապահովելու համար սահմանադիրը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ սահմանել է հսկողություն իրականացնելու իրավասություն (Սահմանադրության 188-րդ հոդված)[2]:

Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության ոլորտում սահմանված է սահմանադրական շատ կարևոր սկզբունք՝ օրինականության սկզբունքը, նման վերահսկողության ցանկացած ձև պետք է նախատեսված լինի Սահմանադրությամբ կամ օրենքով: Այս շատ կարևոր սկզբունքն ունի տարբեր հետևանքներ. Նախ՝ վերահսկողության բոլոր ձևերը պետք է ունենան օրենսդրական հիմք, ինչը նշանակում է, որ արգելվում են ad hoc ընթացակարգերը (վերահսկողության չկարգավորված դեպքեր): Վերահսկողությունը չի կարող իմպրովիզացվել կամ պատվիրվել ավելի բարձր մակարդակի իշխանությունների կողմից՝ առանց հստակ իրավական հիմքի: Սա, որպես հետևանք, նշանակում է, որ կառավարման ավելի բարձր մակարդակները չունեն տեղական ինքնակառավարման մարմիններին վերահսկելու ընդհանուր լիազորություններ և կարող են կիրառել միայն վերահսկողության այնպիսի մեթոդներ, որոնք խստորեն կարգավորվում են օրենքով: Միևնույն ժամանակ, վերահսկող մարմինները պետք է խստորեն պահպանեն օրենքով սահմանված

[1] *Տե՛ս CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government, § 123:*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի թիվ ՍԴՈ-1593 որոշումը:*

ընթացակարգերը նման վերահսկողության իրականացման համար (ժամանակ, եղանակ, իրավասություն և այլն), քանի որ հակառակ դեպքում վերահսկողությունը կլինի անվավեր և կարող է վիճարկվել վերահսկվող տեղական իշխանության մարմնի կողմից[1]:

Այս երաշխիքները մի կողմից ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը, նախանշում են վարչական վերահսկողության թույլատրելի սահմանները՝ կանխելով պետական իշխանության մարմինների կողմից առանց իրավական հիմքի վերահսկողության հնարավորությունը և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը անհարկի միջամտությունները, իսկ մյուս կողմից ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունը և վերահսկելիությունը՝ բացառելով հնարավոր չարաշահումները:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում առանցքային կարևոր նշանակություն ունի դատական պաշտպանության սահմանադրական երաշխավորումը[2], որն ամրագրված է Սահմանադրության 61-րդ հոդվածում: Այն երաշխավորում է յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը՝ անկախ խախտումը կատարած մարմնի կարգավիճակից: Սա կարևոր երաշխիք է ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև պետական իշխանության մարմինների իրավունքների պաշտպանության համար:

Դատական պաշտպանության հնարավորությունն ապահովվում է նաև սահմանադրական արդարադատության միջոցով: Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերի համակողմանի ապահովումն ու լիարժեք իրականացումը հնարավոր չէ առանց տեղական ինքնակառավարման իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման: Այս առումով տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների իրավական պաշտպանության կարևոր երաշխիք պետք է դիտարկել Սահմանադրության 169-րդ հոդվածով տեղական ինքնակառավարման մարմիններին տրված լիազորությունը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով (սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի մասով) սահմանված դեպքերում դիմելու Սահմանադրական դատարան:

Դատական պաշտպանությունը որպես տեղական ինքնակառավարման և պետական իշխանության երաշխիք ունի երկու կարևոր գործառույթ՝ այն

---

[1] *Տե՛ս CG-FORUM(2020)02-05final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government § 127-131:*

[2] *Խարտիայի 11-րդ հոդվածով հռչակվում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների ազատ իրականացման ապահովման և Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատարանով պաշտպանվելու իրավունք:*

ապահովում է իրավունքի գերակայությունը և կանխարգելում է իշխանության չարաշահումը՝ թե՛ պետական և թե՛ տեղական իշխանությունների կողմից:

Տեղական ինքնակառավարման պաշտպանությունը երաշխավորվում է նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական այլ մարմինների գործունեությամբ, որոնք իրենց սահմանադրական լիազորությունների սահմաններում ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների պաշտպանությունը:

Ընդհանրացնելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները՝ անհրաժեշտ է նկատել, որ այդ փոխհարաբերություններում կարևոր են ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ պետական իշխանության երաշխիքները:

Տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են տեղական հարցերի լուծման համար: Պետական իշխանության մարմինները թեև ուղղակիորեն պատասխանատվություն չեն կրում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղական նշանակության հարցերի լուծման համար, սակայն, իրենց հերթին պարտավոր են ապահովել և երաշխավորել, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարողանան իրականացնել իրենց լիազորությունները: Պետությունն ունի պարտավորություն ապահովելու տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ և անխափան գործունեությունը, ինչն արտահայտվում է նյութական և ոչ նյութական աջակցությամբ: Որպես փոխադարձ երաշխիք՝ պետությունն իր հերթին իրավունք ունի վերահսկելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված շրջանակներում, ինչը հանդիսանում է պետական իշխանության կարևոր երաշխիք՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականության ապահովմանը և կառավարման համակարգի ամբողջականության պահպանմանը:

Եզրակացություն

Սահմանադրական իրավունքի տեսանկյունից պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքների համալիր վերլուծության արդյունքների հիման վրա անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը հիմնված է փոխադարձ երաշխիքների վրա, որոնք մի կողմից ապահովում են պետական ինքնիշխանությունն ու ներպետական իրավակարգը, իսկ մյուս կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ու անկախությունը: Այս երաշխիքները չեն հակասում միմյանց, այլ հանդիսանում են իշխանության տարբեր մակարդակների միջև հավասարակշռությունը ու կայուն կառավարումը ապահովող անհրաժեշտ պայմաններ՝ լիազորությունների հստակ տարանջատմամբ:

2. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում ընկած երաշխիքները պետք է դիտարկել որպես միասնական ու փոխկապակցված համակարգ, որն ապահովում է այդ մարմինների միջև հավասարակշռությունը, երկկողմանի պատասխանատվությունը, արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև հանրային իշխանության ամբողջ համակարգի կայունությունն ու միասնությունը:

3. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության երաշխիքների համակարգում որպես՝

1) տեղական ինքնակառավարման երաշխիքներ անհրաժեշտ է դիտարկել այն երաշխիքները, որոնք պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության շրջանակներում ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ու անկախությունը, նրանց իրավունքների իրականացումն ու պաշտպանությունը,

2) պետական իշխանության երաշխիքներ անհրաժեշտ է դիտարկել այն երաշխիքները, որոնք պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության շրջանակներում ապահովում են պետական ինքնիշխանությունը և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ու վերահսկելիությունը, ինչպես նաև ներպետական իրավակարգի կայունությունը՝ բացառելով չարաշահումները:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, ընդունված 15.10.1985 թ.:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշում:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշում:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1593 որոշում:

6. Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում (ուսումնամեթոդական ձեռնարկ): **Կ. Ալթունյան**: Եր., ԵՊՀ հրատ., 2021, 160 էջ:

7. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք // ընդհանուր խմբագրությամբ **Գ.Դանիելյանի**: Երևանի պետ. համալս., «Հայրապետ», 2015, 384 էջ:

8. **Վաղարշյան Ա.Գ.,** Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները

(համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»: Երևան, 2017, № 3 (24):

9. **Витрук Н.В.** Основы теории правового положения личности в социалистическом обществе. - М.: Наука, 1979. - 229 с.

10. **Власенко Е.Е.** Конституционные гарантии муниципальной власти в России // Право и практика. 2017. № 4.

11. **Карасева М.В.** Финансовое правоотношение. - М., 2001. - 288 с.

12. **Князев С.Д.** Местное самоуправление в Российской Федерации: конституционная природа и значение для муниципального права // Журнал российского права. 2008. № 6 (138).

13. **Козлова Е.И, Кутафин О.Е.** Конституционное право Российской Федерации: учебник. - М.: Юрист, 1995.- 480 с.

14. **Корнев В.Н., Нифанов А.Н.** Гарантии местного самоуправления: теоретико-методические аспекты. - Белгород, 2008. - 26 с.

15. Муниципальное право: учебник / С.Г. Соловьев, Е.И. Бычкова. - М., 2015. - 461 с.

16. **Шайхуллин М.С.** Конституционно-правовые гарантии развития местного самоуправления в Российской Федерации. Диссертация ... доктора юридических наук: 12.00.02, 515 с.

17. **Фарбер И.Е., Ржевский В.А.** Вопросы теории советского конституционного права. Выпуск 1. - Саратов, 1967. - 319 с.

18. **Эбзеев Б.С.** Советское государство и права человека. - Саратов, 1986. - 184 с.

19. CG-FORUM(2020)02-05 final, A contemporary commentary by the Congress on the explanatory report to the European Charter of Local Self-Government.

ГАРАНТИИ ВЗАИМОДЕЙСТВИЯ ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ И ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ

Аннотация

В статье рассматриваются гарантии взаимодействия органов государственной власти и органов местного самоуправления в контексте конституционного регулирования.

В рамках исследования были проанализированы представленные в теоретической литературе научные подходы к гарантиям взаимодействия органов государственной власти и органов местного самоуправления, отдельные конституционно-правовые нормы, а также на основе проведенного конституционно-правового исследования выявлены гарантии,

лежащие в основе взаимодействия органов государственной власти и органов местного самоуправления.

Целью настоящей статьи является выявление гарантий взаимодействия органов государственной власти и органов местного самоуправления в контексте конституционного регулирования и их разграничение.

В статье рассматриваются вопросы, которые в той или иной степени нашли отражение в трудах различных авторов, однако параллельно в статье рассматриваются вопросы, которые не были предметом отдельного комплексного научного обсуждения и правового исследования.

В статье на основе проведенного правового анализа представлены гарантии взаимодействия органов государственной власти и органов местного самоуправления в контексте конституционного регулирования, которые рассматриваются как единая и взаимосвязанная система взаимных гарантий, обеспечивающая баланс этих органов, их взаимную ответственность, эффективное сотрудничество, а также стабильность и единство всей системы публичной власти.

Ключевые слова: органы государственной власти и органы местного самоуправления, взаимодействие, гарантии.

GUARANTEES OF INTERACTION BETWEEN STATE AUTHORITIES AND LOCAL SELF-GOVERNMENT AUTHORITIES IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REGULATION

Annotation

This article examines guarantees of interaction between state authorities and local governments in the context of constitutional regulation.

This study analyzes scholarly approaches to guarantees of interaction between state authorities and local governments presented in the theoretical literature, as well as individual constitutional and legal norms. Based on the conducted constitutional and legal research, it identifies the guarantees underlying interaction between state authorities and local governments.

The purpose of this article is to identify guarantees of interaction between state authorities and local governments in the context of constitutional regulation and to distinguish between them.

This article examines issues that have been addressed to varying degrees in the works of various authors, but also addresses issues that have not been the subject of separate, comprehensive academic discussion or legal research.
Based on the legal analyses conducted, the article presents the guarantees of interaction between state authorities and local self-government bodies in the context of constitutional regulations, considering them as a unified and interconnected system of mutual guarantees, which ensures balance between these bodies, mutual responsibility, effective cooperation, as well as the stability and unity of the entire system of public authority.
Keywords: state authorities, local self-government authorities, interaction, guarantees.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.12.2025 թ., տրվել է գրախոսության 05.12.2025 թ., ընդունվել է տպագրության 15.12.2025 թ.: